

ՍՍՏԱԹ-ՆՈՎԱՅԻ ԼԱՅՆՈՒՆ ԽԱՂԵՐԻ ՀՆՋՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ե. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սայաթ-Նովայի լեզվին ուսումնասիրողներն անդրադարձել են գլխավորապես խաղերի ժողովածուները կազմելու կամ Թիֆլիսի բարբառը քննելու առիթներով:

Սայաթ-Նովայի խաղերի առաջին հրատարակիչ Գ. Ախվերդյանը ներկայացնում է Թիֆլիսի բարբառի ձևաբանական իրողությունները: Այնուհետև հերթական ամեն խաղից հետո տեղնուտեղը վերլուծվում են հնչյունական երևույթները, համեմատվում Թիֆլիսի բարբառում առկա համանման հնչյունական երևույթների հետ, երբեմն նշվում է նաև, թե ինչպես է հընչում բառը «Թիֆլիզու բարբառում»:

Գ. Լեոնյանն իր քննական ակնարկում Սայաթ-Նովայի կենսագրությունից հետո դառնում է խաղերի գեղարվեստական արժեքին, պատկերային-ոճական առանձնահատկություններին ու նմանություններին: Սայաթ-Նովայի լեզուն Գ. Լեոնյանը համարում է Թիֆլիսի բարբառ՝ համեմատած «էլ ավելի շատ օտար բառերով», որը բացատրում է բանաստեղծի ապրած ժամանակով և կենսագրական տվյալներով, Թիֆլիսի միջավայրում պարսից մշակութի և լեզվի ազդեցությամբ<sup>1</sup>:

Ռ. Աբրահամյանը, «Սայաթ-Նովայի տաղերը» աշխատասիրության մեջ բանաստեղծի կենսագրության և ժառանգության համեմատական քննությամբ առանձնացնելով երգչին վերագրվող «անհարազատ խաղերը», անցնում է լեզվի հարցերին: Առանձին՝ «Հնչաբանություն», հատվածում արձանագրվում են խաղերի լեզվում գործառուղ հնչյունական իրողությունները: Ռ. Աբրահամյանի համոզմունքով ևս Սայաթ-Նովայի լեզուն Թիֆլիսի բարբառն է<sup>2</sup>:

Ա. Ղարիբյանը հնչյունաբանական որոշ հարցերի անդրադառնում է Թիֆլիսի բարբառի առնչությամբ: Մատնանշելով խաղերի լեզվի ձայնավորական և բաղադայնական համակարգում առկա Թիֆլիսի բարբառին բնորոշ իրողությունները, նա ևս հանգում է այն եզրակացության, որ երգչի «լեզվի հենքը Թիֆլիսի բարբառն է»<sup>3</sup>:

«Թիֆլիսի» գուսանական դպրոցի լեզվական առանձնահատկությունների քննության արդյունքում Ռ. Իշխանյանը նույնպես հավաստում է, որ Սայաթ-Նովայի ստեղծագործել է մայրենի՝ Թիֆլիսի, բարբառով: Ընդ որում, շեշտվում է «տեղական բարբառի բացարձակ գերակշռությունը»<sup>4</sup>: Անշուշտ, պետք ընդունել բացարձակ գերակշռությունը, և սակայն, միաժամանակ պետք է հաշվի առնել նույն Թիֆլիսի բարբառի լեզվական խառնուրդի իրողությունը:

<sup>1</sup> Սայաթ-Նովա, աշխատասիրությամբ Գ. Ախվերդյանի, Մոսկվա, 1852, էջ 1—41:

<sup>2</sup> Սայաթ-Նովա, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու, աշխատասիրությամբ Գ. Լեոնյանի, Երևան, 1931, էջ 55—59, 63:

<sup>3</sup> Սայաթ-Նովայի տաղերը, աշխատասիրությամբ Ռ. Աբրահամյանի, Թեհրան, 1943, էջ 32:

<sup>4</sup> Ա. Ղարիբյան, Թիֆլիսի բարբառը Սայաթ-Նովայի երգերում (Սայաթ-Նովա, Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, 1963, էջ 75):

<sup>5</sup> Ռ. Իշխանյան, Արեւելահայ բանաստեղծություն լեզվի պատմություն, Երևան, 1978, էջ 75:

1604—1605 թթ. Շահ-Աբբասի բռնի «մեծ գաղթը» Հայաստանի բնակչության մի մասին էլ ստիպում է փախչել Վրաստանի կողմերը<sup>6</sup>։ Ասպատակությունները շարունակվում են, ինչպես հայտնի է, մինչև XVII դ. երեսնական թվականները, երբ Հայաստանը դարձյալ շարունակում էր մնալ ռազմական թատերաբեմ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև։ Բնական է, որ ասպատակություններից, տեղահանությունից հոգնած ժողովուրդը պետք է դիմեր և պատսպարվեր ավելի ապահով վայրերում, նաև՝ Թիֆլիսում։ Ինչպես նշում է Ն. Աղբալյանը, «Հավլաբարի բնակչության մի ստվար մասը Երևանի գաղթականներն են...»<sup>7</sup>։

Անշուշտ, վերը նշված լեզվական խառնուրդի հանգամանքը նկատի ունենալով է Ա. Թոմսոնը շեղտում, որ «...խաղերի լեզուն ճշգրիտ պատկերացում չի տալիս Թիֆլիսի բարբառի մասին»։ Հետազոտողի կարծիքով բանաստեղծի լեզվում արևելյան փոխառությունների առատությունը չի համապատասխանում Թիֆլիսի առօրյա խոսակցական լեզվին։ Արձանագրվում են նաև տարբերակիչ հատկանիշներ՝ ուրիշ բարբառների ազդեցություն համարվող բառաձևերի (ինչպես՝ խոսալով, փխն, խոսելով, լացիլ իմ, փխն, լաց իմ էլի և այլն), ավելորդ վանկ ունեցող գրաբարյան ձևերի գործածություններ, ք-ից հետո բառավերջի ն-ի պահպանում և այլն<sup>8</sup>։

Իր հերթին Ն. Աղբալյանը նույնպես կարծում է, որ երգչի՝ առատորեն գործածած արևելյան փոխառյալ բառերը «խճողում են բարբառը»։ Նա միաժամանակ ավելացնում է, որ Սայաթ-Նովան ինքն էլ շատ «եկամուտ տարերև» է օգտագործել։ Ն. Աղբալյանը նշում է, որ անտարակուսելի է և հալեպցի հոր լեզվի ազդեցությունը բանաստեղծի խաղերի լեզվի վրա<sup>9</sup>։

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները արձանագրում են Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լեզվում արևելյան փոխառությունների առկայությունը, ինչպես և մյուս բարբառների ազդեցությունը։ Ուրեմն որքանով է այդ ամենը դրսևորվել բանաստեղծի հայերեն խաղերի լեզվի հնչյունական համակարգում։ Նախքան հարցին դառնալը՝ մեկ-երկու բացատրություն։

Երգչի ձեռագրերի առաջին երախտավոր վերծանող Գ. Ախվերդյանի հավաստումով՝ հայերեն բոլոր խաղերը գրված են «վրաց բավական վարժ նոտրգրով», դժվար ընթեռնելի են, և բառերում երբեմն բացակայում են բաղաձայն և ձայնավոր հնչյուններ<sup>10</sup>։

Սայաթ-Նովայի վրացատառ գրելու պատճառը Ռ. Իշխանյանի կարծիքով, թերևս, «Թիֆլիսի բարբառի արտասանական անարատությունը» պահպանելն էր<sup>11</sup>, բարբառի հնչյունական համակարգը շղճատելու մտահոգությունը։ Այնպես որ խաղերը հայերեն տառադարձելիս, Գ. Ախվերդյանը ոչ թե պարզապես արտագրել է ձեռագիրը, այլ «ստիպված է եղել բնագիր կազմել», ուստի և տառադարձումը ճշգրտել, լրացրել է կոահումներով, նման առիթներով տվել է բացատրություններ։ Ն. Աղբալյանի վկայությամբ Գ. Ախվերդյանը «բնիկ թիֆլիսեցի էր և հմուտ էր մայրենի բարբառին», գիտեր գրաբար և աշխատանքի ընթացքում երբեմն «խաչաձևել է գրաբարի ուղղագրությունն ու բարբառի հնչումը»<sup>12</sup>։ Զի կարելի անտեսել և այն, որ ժողո-

<sup>6</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 99։

<sup>7</sup> Ն. Աղբալյան, Ամբողջական երկեր, հ. II, Սայաթ-Նովայի հետ, Բելուս, 1966, էջ 21։

<sup>8</sup> А. Томсон, Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб., 1890, с. XIX. Գրքի առաջաբանում Ա. Թոմսոնը նշում է, որ «Թիֆլիսահայերեն» ասելով նկատի ունի բացառապես «Թիֆլիսի հնագույն հայ բնակիչների ժառանգներին» (տե՛ս նույն տեղում, էջ XI)։

<sup>9</sup> Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 159—160։

<sup>10</sup> Սայաթ-Նովա, էջ ԺԳ-ԺԴ։

<sup>11</sup> Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 75։

<sup>12</sup> Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 178։

վածուն սրբագրել է Մկրտիչ էմինը, որը նույնպես կարող էր «ուղղումներ կատարել»։ Ի հաստատումն ասվածի, թերևս, արժե հիշատակել Սայաթ-Նովայի լեզվին վերաբերող ն. Աղբալյանի դիտողությունները՝ «նույն բառի տարբեր գրություններ, բառերի և մասնիկների կից և բաժան գրություններ, պակասորդ տառեր, բնագրի սխալ ընթերցումներ և սխալ գրադարձություն» և այլն<sup>13</sup>։ Ուստի և կարելի է որոշակի ասել, որ հիմնականում գործ ունենք խաղերի լեզվի բազմիցս ստուգված ու ճշտված հնչյունական հենքի հետ, որը և փորձում ենք ընդհանուր տեսքի բերելով համակարգայնացնել՝ քաղելով ամենավստահելի իրողությունները։

Վերը հիշատակված ուսումնասիրություններում հնչյունական երևույթները ներկայացված են առանց որոշակի համակարգայնացման, քննվում են առանձին-առանձին։ Համակարգային տեսքի բերելու նպատակով՝ համեմատել ենք Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լիակատար ժողովածուների բոլոր հրատարակությունները, ինչպես և Ա. Քոչոյանի «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանը»<sup>14</sup>։

Ստորև ներկայացնենք Սայաթ-Նովայի հայերեն խաղերի հնչյունական իրողությունները։

Ձայնավորներ. դրանց հնչյունափոխությունը։ Թիֆլիսի բարբառը, հետևաբար և Սայաթ-Նովայի լեզուն, Ռ. Աբրահամյանի կարծիքով «ըստ իր հնչաբանական դրուսյան հնարավորին չափով հարազատություն է պահպանել հնչյունների նախնական արտասանությունը և այդ կողմից մոտ է Երևանի բարբառին»<sup>15</sup>։ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի լեզվում առկա ձայնավորներն ու դրանց հնչյունափոխական երևույթները մեր համեմատության արդյունքում ընդհանուր առմամբ բնորոշ են հայերենի բոլոր դրսևորումներին։ Ձայնավորների համակարգում նկատելի է ե ձայնավորի հնչյունափոխության առավել մեծ հաճախականությունը։ Զգալի փոփոխություն է կրում և ո ձայնավորը, որի հնչյունափոխության շնորհիվ մեծ աշխուժություն է ցուցաբերում ու-ն։ Ինչպես հայտնի է, Թիֆլիսի բարբառում այն ամբողջովին փոխարինում է ո ձայնավորին<sup>16</sup>։

Ձայնավորների հնչյունափոխական իրողությունները, բառի մեջ ըստ դիրքային բաշխվածության, ընդհանուր առմամբ ներկայացնում են հետևյալ պատկերը՝ բառասկիզբ. ե>յի—միավանկ բառերում՝ յիս, յիփ. ո>վու—վուխալ, վունչիչ, վունց, վուտ, վուր, վուրթի, վուրալ, միավանկ բառերի սկզբնային ե և ո ձայնավորներից առաջ համապատասխանաբար յի-ի և շրթնային տարրի հավելում դիտվում է հայ բարբառների մեծ մասում<sup>17</sup>։ Նշված երևույթները արձանագրվում են Թիֆլիսի բարբառում։ Հնչյունափոխված ձևը կարող է պահպանվել և բառաբարդման ժամանակ՝ սրբամավուրթի։

Ա>է հնչյունափոխությունը Սայաթ-Նովայի լեզվում հանդիպում է միայն էրծաթ բառում։ մի երևույթ, որն օրինաչափ չի դիտվում և՛ միջին

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 180—196։

<sup>14</sup> Ա. Քոչոյան, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանը, Երևան, 1963։ Բառարանի առաջաբանում Ա. Քոչոյանը քննում է բառակազմությունը՝ փոխառյալ բառեր, հարադրական բարդություններ, դարձվածքներ, շաղկապների գործածությունը։ Հնչյունական իրողություններին նա անդրադառնում է բառարանի ստղատակերում (տե՛ս էջ 27, 102, 116...), անհրաժեշտության դեպքում հղելով Մ. Հասրաթյանի կազմած ժողովածուն։ Բնագրում բերված օրինակները քաղված են վերը նշված հրատարակություններից և Ա. Քոչոյանի բառարանից։

<sup>15</sup> Սայաթ-Նովայի տաղերը, էջ 32։

<sup>16</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 268։

<sup>17</sup> Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 63 և աղ. III, Վուրսալ, վուրսնուրթ բառերը Ա. Թումանյան Թիֆլիսի բարբառաձև չի դիտում, որքանով որ՝ «այժմ (Թումանյանի ժամանակ—Ն. Հ.) միայն ասում են հուրս, հուրս անիլ» (Ա. Կոմ. — ՇՈՒ. նշվ. աղիս., էջ 36)։

հայերենում և արձանագրվում է միայն առանձին բառերի շրջանակներում<sup>18</sup>։

Կարելի է նշել նաև ե>է և ո>օ բարբառային արտասանությանը բնորոշ իրողությունները՝ էրագ, էրանի, էրեգ, էրեխա, էրես, էրթալ, էրկաթ. օսկէ, օսկէջրած, օշ ով։

Բառամեջ. ե>ի—այբբիմբե, անմիդ, առչիվ, ավիտաբան, աբիվ, աբիվիլֆ, աբիվմուտ, բիմ, բիռ, գիդ, գիդ, դիդ, դիվ, էնտիդ, թիլ, թիդ, լայիդ, լիգու, լիլի, լիրթ, խիլֆ, խիվ (-անալ), ծիդ, կաթնակիր, համիմ, հիդ, հիշտ, հինաճալ, հիոու, ձիգ, ձիռ(f), ձիգ, միխ, միխակ, միծ /միենձ, միխկ /միդֆ/ միդ, միդր, միռ, էիտ, պատկիրֆ, ջրհիդիդ, սիվ (-անալ), սիրմ, վիրչ, վից, տիդ, տիս (ն), ցիդ, ֆիգ (ի), ֆրիհ։

ե>ի հնչյունափոխություն է նկատվում նաև հոգնակերտ -եռ, -հեռ, ձևություններում, դերբայական -ել վերջավորությունում, օժանդակ բայի ձևերում (բացառությամբ երրորդ դեմքի), ճիշտ այնպես, ինչպես Թիֆլիսի բարբառում<sup>19</sup>։

Ու>ու—արունուտ, ափսուս (-ալ), Գևուրֆ, գուլ, թուլ, թուֆ, լիդնուրթ, լուր, խուգ, խուց (-վիլ), ծուց, կուք, հուր, դուրթ, հիպուտ, նուրտ, մում, նուր (-իլ), շնուֆ, շուրեղեն, շուրանալ, շուրս, պխտուր, փուֆր, փուր, ֆու։

Նշված երկու հնչյունափոխությունները (ե>ի, ո>ու) Ռ. Աբրահամյանը համարում է Սայաթ-Նովայի լեզվի հնչյունական համակարգի «ամենակարևոր փոփոխությունները»<sup>20</sup>։ Հարկ է նշել, որ այդ «ամենակարևոր փոփոխությունները» բնորոշ են ինչպես Թիֆլիսի, այնպես էլ Մեղրու, Կարճեվանի, Ագուլիսի, Յոնայի, պատմական Նախիջևանի տարածքի գյուղերի բարբառներին<sup>21</sup>, այդ թվում, օրինակ, հնամենի Գողթն աշխարհի Փառակա գյուղի խոսվածքում հանդիպող հետևյալ բառերում. ե>ի՝ քվիտաբան, քրիվ, թիլ, խիլֆ, հիս, հիշտ, ծիգ, միռ, միգ, սիրմ, վիգ և այլն, ո>ու՝ արունուտ, թուլ, թուֆ, խուգ, ծուց, կուք, դուրթ, հիպուտ, մում, նուր և այլն։ Այստեղից հետևում է մի կարևոր եզրակացություն. Սայաթ-Նովայի ժամանակների Թիֆլիսի բարբառի խառնուրդում նշանակալի բաժին է պատկանում Շահ-Աբբասի և հետագա ասպատակություններից առավել տուժած Արարատյան դաշտավայրի հետ նաև պատմական Նախիջևանի տարածքի բնակչության բարբառներին։

Հնչյունական հաջորդ իրողությունը վերաբերում է ձայնավորների՝ բ-ի հնչյունափոխվելուն, որ նկատվում է բայական վերջավորություններին նախորդող վանկում (ոչ միշտ միջնավանկում). ա>բ—լացցեիլ, փաթթիլ, խոստովեիլ, լուացցեիլ, ո>բ—բուրվիլ, ոլբրվիլ, մուրբիլ։

Ձայնավորները բ-ի են հնչյունափոխվում և այլ խոսքի մասերում, այսպես՝ ա>բ—բաղմրնչի, էրկրթէ, անգրծակի։

Ձայնավորների քննությունից հետևում է նաև, որ ընկնում կամ սղվում են հատկապես ա, ո, ու ձայնավորները։ Երևույթն արձանագրվում է բայերում՝ միջնավանկի ձայնավորի անկմամբ. ա>Օ—ավտալ, բեգրիլ, խավրիլ, հավնալ, պակսիլ, ցամֆիլ, ո>Օ—խուրվիլ։ Բազմաթիվ նման բայաձևեր, ինչպես հայտնի է, առանձնահատուկ են արևմտահայ բարբառներին և գործածական արևմտահայ գրական լեզվում<sup>22</sup>։

Բառասկզբում ձայնավորի անկում է նկատվում միայն ղրբգիլ բայում (ու>Օ)։

18 Ակնարկներ միջին դարական հայերենի պատմության, հ. Ա (այսուհետև՝ Ակնարկներ), Երևան, 1972, էջ 76։

19 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 270, 273։

20 Սայաթ-Նովայի տաղերը, էջ 34։

21 Գ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 64 և աղ. III, Ակնարկներ, էջ 85, Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Երևան, 1962, էջ 116, 119։

22 Հ. Մուրադյան, Նշվ. աշխ., էջ 87։

Սահմանական ներկայի կազմության ժամանակ՝ կու հղանակիչ + ա ձայնավորով սկսվող բայ կառույցում տեղի է ունենում կու + ա > կօ հնչյունափոխություն՝ (վիր) կօծիմ (կօնիմ) կօնիս, կօսէ, կօսիմ<sup>23</sup>:

Հնչյունափոխական հետաքրքիր իրողություններից կարելի է առանձնացնել հետևյալները՝ ե > յա — յուր(ա)սուն<sup>\*</sup>. աւ > Օ — սրբուր (թերևս < սքաւուր):

Դառնալով շեշտի հետ կապված ձայնավորների հնչյունափոխությանը, հետազոտողները նկատում են, որ Սայաթ-Նովայի լեզվում սովորաբար շեշտն ընկնում է վերջնիքի վանկի վրա, այսինքն՝ այնպես, ինչպես Թիֆլիսի բարբառում<sup>24</sup>, Բառաթեքման ժամանակ (նաև բառարարումն) ընկնում կամ սղվում են ձայնավորները, հատկապես ա-ն, այսպես՝ ա > Օ — ավգի, բերեի, բերնում, թանի, իոստովեաներ, նակաի, չոբնին, ռեճնով, ռեճնին, փալկով, ե > Օ — անդի:

Երկբարբառների ճնշումափոխություն: 2. Մուրադյանի հիմնավորումով՝ «գրաբարի բոլոր երկբարբառները... պատմական դարգացման ընթացքում մեր բարբառներում վերածվում են պարզ ձայնավորների»<sup>25</sup>: Այս օրինաչափությունը հաստատում են նաև Սայաթ-Նովայի լեզվի երկբարբառների հնչյունական փոփոխությունները: Այսպես, արևելյան բարբառների մեծ մասում լայնորեն կիրառվող ալ > է հնչյունափոխության համաձայն հնչյունափոխության են ենթարկվում հետևյալ բառերը՝ էս, էտ, էն, էսօր, էնպես, էրիլ (էրվիլ), ձէն, խոստովեաներ, կէծակ, փէտ և այլն:

Հաճախակի է հանդիպում նույնպես ժամանակակից բարբառներում գործուն ոյ > ու հնչյունափոխությունը՝ լուսըն, կարմրագուն, կուր, համբուր, պտուտ (գալ), վարաֆուր, ֆուր:

Ինչ վերաբերում է ի < երկբարբառին, ապա այն Սայաթ-Նովայի լեզվում, ինչպես և հայ բարբառներում, հնչյունափոխության երկու տարբերակ ունի՝ իւ > ու՝ հարուր, հուր, հուսիլ, արուն (ուտ), հուխկ, որ հատուկ է Մուշ-Սասուն—Երզնկա—Ակն—Մալաթիա—Շապին—Գարահիսար — Կարին տարածքին<sup>26</sup> և իւ > ի՝ արին, որ բնորոշ է Արարատյան բարբառի խոսվածքներին, այլ և արևմտյան տարածքի մի շարք բարբառներին<sup>27</sup>: Խաղերի լեզվում առկա իւ > ի հնչյունափոխությունը գործառում է հատկապես — ութին ածանցող բառերում՝ անմահութին, խոնարութին, համփիրութին, ճնպարտութին, սիրունութին: Այս հնչյունափոխությունը բնորոշ է Ագուլիս-Մեղրի-Ղարաբաղ տարածքի խոսվածքների մի մասին և, ինչպես նշում է Գ. Ախվերդյանը. Թիֆլիսի բարբառին<sup>28</sup>:

Բառաթեքման ժամանակ, ինչպես և այն դեպքերում, երբ բառը հոգնակերտ ձևույթ է ստանում, իւ երկբարբառը հնչյունափոխվում է ի-ի՝ ձրնի, սրնի: Մնացյալ երկբարբառներից ալ և եա-ն հանդիպում են հնչյունափոխական մեկական նմուշով. ալ > ի՝ գիլի, եա > ի՝ կիւն:

Հետաքրքիր է նաև զովհար, ուստաղ, թաջ փոխառյալ բառերում պահպանված զուտ պարսկական հնչողության հանգամանքը<sup>\*\*</sup> — Վ-, -դ-, -ջ բաղա-

<sup>23</sup> Հմմտ. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 269, Սայաթ-Նովայի տաղերը, էջ 33, Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 94:

<sup>\*</sup> Ն. Աղբալյանը, ելնելով բանաստեղծական տողերի հատածներից և չափից, գտնում է, որ այս բառում հրատարակիչն ուղղակի բաց է թողել ա ձայնավորը. տե՛ս Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 188:

<sup>24</sup> Սայաթ-Նովայի տաղերը, էջ 36, Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 270, А. Томсон, նշվ. աշխ., էջ 23:

<sup>25</sup> 2. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 30:

<sup>26</sup> 2. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 189:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 191, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 63 և աղ. III:

<sup>28</sup> 2. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 193, Սայաթ-Նովա, էջ 53—54:

<sup>\*\*</sup> Այս մասին տե՛ս Սայաթ-Նովայի տաղերը, էջ 61:

ձայնների առկայությամբ, քանի որ հայերենում դրանք առկա են զօհար, ուստա, քազ հնչողությամբ:

Բաղաձայնների հնչյունափոխությունը: Ըստ Ա. Ղարիբյանի, Թիֆլիսի բարբառը բառասկզբում ունի եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ. բառամիջում ձայնեղը վերածվում է շնչեղ խուլի (հատկապես՝ ր, դ բաղաձայններից հետո). ձայնավորներից հետո ձայնեղը խլանում է, երբեմն՝ խուլը ձայնեղանում. մի շարք դեպքերում, խուլի հանդիպելիս, շնչեղ ձայնեղը վեր է ածվում պարզ խուլի<sup>29</sup>: Համապատասխան օրինակներով բաղաձայնական նույնպիսի համակարգ է վերագրվում և Սայաթ-Նովայի խաղերի լեզվին: Եվ, սակայն, ուշադրությամբ հետևելով վերջինիս քննության րնթացքին, նկատում ենք եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգի (բառասկզբում) խախտման մասնակի դեպքեր. այսպես՝ ձայնեղանում է կ, կոն եղանակիչ մասնիկը՝ գու քամ, գու լամ, գուգէ<sup>30</sup>: Գ ձայնեղը շնչեղ-խուլ Լ է դառնում գալ բայում, հատկապես նշված գու եղանակիչ մասնիկի գործածություններում՝ գու ֆամ, գու ֆամ, գու ֆա... Ք շնչեղ-խուլը վերածվում է պարզ խուլի՝ կանց > ֆանց:

Բառամիջում և բառավերջում գործում են ապաձայնեղացման, ձայնեղացման, շնչեղ-խլացման, ապաշնչեղացման երևույթներ: Ձայնեղ պայթականներն ու կիսաշփականները (բ, գ, դ, ձ, ջ) բառամիջում շնչեղ-խուլի են վերածվում (փ, ք, թ, ց, շ) և բաղաձայնից հետո՝ զարթարիլ, կարթալ, կարիլ, հարփիլ, մարֆիտ, պարֆիվիլ, վուրթ: Հանդիպում են շնչեղ-խլացման դեպքեր նաև միջձայնավորային և այլ դիրքերում՝ Աթամ, քաֆավուր, հոֆի, մաֆաաթ, շափաթ, վարաֆուր, առչիվ, րացրանալ, խոնթկար, համփիռութիս, հաֆնիլ, մեչկ/միչկ: Նույնը նկատվում է և բառավերջում՝ աշափ, յիփ, սուրփ: Գևուրֆ, կարֆ. յիթթ, մարթ, վարթ. օց. առաշ, մեշ, վիրշ, տիրուշ: Իրողություն, որ բնորոշ է հայ բարբառների մեծ մասին<sup>31</sup>:

Շնչեղ-խլացման է ենթարկվում տ բաղաձայնը գթնիլ բայում:

Սակավադեպ է նաև բառամիջում և բառավերջում դիտվող ապաձայնեղացումը. եխպայր/ախպեր, վուխպալ, անգան, ալոալ: Ն, ր ձայնորդներից հետո, միջձայնավորային և այլ դիրքերում խուլերը ձայնեղանում են. կ > ք՝ անգան, քեռուգ, տրեգիր, գրգիլ, արեգագ, հանգ, էրեգ, ջոգիլ, անգրեծակի, ծուեգ, տեանգ. ծ > ձ՝ անգործիլ, աստուած, գործ, մեծծիլ, միեծ. պ > ր՝ արա, ամբ, որատուե, դիբշիլ, հանդիրիլ. տ > դ՝ գեդին, գիդ, գիդեմալ, դադասալ, դարդակ, հիդ, մոդ, վադ, տեդդիլ: Հնչյունական այս երևույթը հատուկ է գերազանցապես արևմտահայ բարբառախոս վայրերին<sup>32</sup>:

Ապաշնչեղացման ժամանակ (շնչեղ-խուլ → խուլ) խոսքը վերաբերում է ինչպես՝ փոխազդեցական հնչյունափոխությանը, ասել է՝ կից բաղաձայնների ազդեցությամբ շնչեղ-խուլն ապաշնչեղանում է (թուխտ, խոսկ, մեչկ), այնպես էլ՝ ապաշնչեղացման ընդհանուր երևույթին՝ անկախ հնչյունական միջավայրից՝ աղկալտ, բերթերուկ, աշկ, միտկ, պետկ, ֆաղկով: Ապաշնչեղացման երևույթ է արձանագրվել արևմտահայ մի քանի բարբառների (Համշենի, Սիրիայի, Մշո) որոշ խոսվածքներում<sup>33</sup>:

Ձայնորդների, շփականների հնչյունափոխություն: Քննելով հայերենի ձայնորդների, շփականների ծագումը, պատմական փոփոխությունները, գործառնությունը միջնադարյան գրավոր աղբյուրներում ու բարբառներում Հ. Մուրադյանը նկատում է, որ դրանք որոշ վայրերում ենթարկվում են է

<sup>29</sup> Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 268—269, նույնի՝ Թիֆլիսի բարբառ..., էջ 70—71:

<sup>30</sup> Հմմտ. Ն. Աղրալյան, նշվ. աշխ., էջ 36, Ա. Քոչոյան, նշվ. աշխ., էջ 102: Վերջինս նման հնչյունափոխություն է դիտում ճգալ, լալ և ձայնավորով սկսվող բայերից առաջ:

<sup>31</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 43—44 և աղ. II:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Նույն տեղում:

մասնակի փոփոխությունների: Մասնակի փոփոխություններից է ու-ր ձայնորդների միջև եղած արտասանական տարբերության վերացումը՝ հակա-նորդների ձայնը արտահայտվում է ու-ով: Համանման հնչյունական երևույթ է դրվող զույգն արտահայտվում է ու-ով: Համանման հնչյունական երևույթ է արձանագրված Թիֆլիսի բարբառում, ինչպես և Ղարաբաղի բարբառի Տու-արձանագրված Թիֆլիսի բարբառում, ինչպես և Ղարաբաղի բարբառի Տու-արձանագրված Թիֆլիսի բարբառում<sup>34</sup>: Սայաթ-Նովայի լեզվում ևս բացակայում է ու ձայնորդը՝ սուրանց, արավուտուց, դարավ, դարա, կշիւրք, բանգ, բուս, Բարասուն:

Ձ>Ս: Խաղերի լեզվում զ-ի փոխարեն ս է հանդիպում անսկամ և ասկ բառերում: Ձայնեղ պայթականները որոշակիորեն խլացել են, զ-ն էլ ձայնեղության կորստով վեր է ածվել ս-ի: Արձանագրված հնչյունական իրողու-թյունը համարվում է ոչ համահայկական, բնորոշ՝ հզրային որոշ բարբառ-ների (Անտիոքի շրջանի, Վասպուրականի և Արցախի տարածքի մի շարք խոսվածքների)<sup>35</sup>:

Լ-ն հնչյուններին հաջորդող բաղաձայնների խլացման հետևանքով (ձայ-նեղ→խուլ, շնչեղ խուլ→խուլ) հնչյունափոխություն է նկատվում ղ և խ լծոր-դակից հնչյուններում: Խաղերի լեզվում ղ-ի փոխարեն խ է առկա ախտիլ, դժոխկ, քախտ, նուխկ, միխկ, վուխպալ, ալլա՝ պխտուր, ֆախցր բառերում. երևույթ, որ դրսևորվում է հայ բարբառների մեծ մասում<sup>36</sup>:

Ուսումնասիրողները Սայաթ-Նովայի լեզվի արևելյան փոխառություննե-րում նշում են հայերենին անսովոր կոկորդային ղ՝ բաղաձայնի առկայու-թյունը՝ ղ՝աբուլ, ղ՝ալամ, ղ՝ամզա, ղ՝այիմ, ղ՝արար, ղ՝ոնաղ և այլն: Կոկոր-դային այս բաղաձայնը հատուկ է Թիֆլիսի բարբառին, որ հեռագոտողները իրավացիորեն համարում են վրացերենի կամ կովկասյան լեզուների ազդե-ցություն<sup>37</sup>:

Շ>ժ: Առնմանությամբ պայմանավորված շ>ժ փոփոխություն է նկատ-վել միայն շարժ (գալ) > ժաժ (գալ)-ում՝ ու-ի անկմամբ. հնչյունափոխված ձևն օգտագործվում է արդի հայերենի խոսակցական տարբերակներում:

Սայաթ-Նովայի լեզվում, ինչպես և Թիֆլիսի, Մեղրու (Կարճևան), Ղա-րաբաղի բարբառների խոսվածքներում<sup>38</sup>, բացակայում է ֆ հնչյունը, սրան փոխարինում է փ-ն՝ ղարանփիլ, մարփաթ, սաղափ, փալ, փահմ, փրսնեղ:

Հ-ի փոխարեն խ է հանդիպում խուղ և օխնիլ բառերում. հնչյունական այս իրողությունը, ըստ Հ. Մուրադյանի, առավել հատուկ է եղել Վասպու-րականի խոսվածքներին, Գ. Զահուկյանի կարծիքով այն առանձնահատուկ է Մուշի, Զուղայի, Նոր Զուղայի, Նոր Բայաղետի, Խոյի բարբառների խոս-վածքներին<sup>39</sup>:

Հնչյունափոխական այլ իրողություններ: Բացի վերը նշվածներից, խա-ղերի լեզվում հանդիպում են նաև հնչյունափոխական այլ երևույթներ՝ հրե-չյունների անկում, հավելում, դրափոխություն, որպիսիք մեծ մասամբ բնո-րոշ են բարբառների լայն շրջանակի:

Հավելական հնչյուններից հաճախական է ն-ն, առավելապես բառամի-ջում՝ բաղաձայնից առաջ. արտաստնք, հնպարտութիք, հանանչիլ, կանանչ, մինձ, վունչիչ, վուսնուրթ: Գերազանցապես հատուկ է Սյունիք-Արցախ տարածքի բարբառներին<sup>40</sup>:

34 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 221, Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 269—270, А. Томсон, նշվ. աշխ., էջ 5, Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 181:

35 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 147—148, Ակնարկներ, էջ 127:

36 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 255, Ակնարկներ, էջ 156:

37 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 269, Ա. Քոչոյան, նշվ. աշխ., էջ 116, А. Томсон, նշվ. աշխ., էջ 5:

38 Ակնարկներ, էջ 125—126, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 47 և աղ. II, Ա. Ղա-րիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 269, Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 94:

39 Ակնարկներ, էջ 133—134, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 47 և աղ. II:

40 Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 326—327:

Բառասկզբում ն-ի հավելում է արձանագրվում միայն նրեզել բայում:  
Հավելական հ է նշվում միայն հենչաբ բառում. երևույթ, որ դրսևորվում է Մեղրի-Կարճևան-Ագուլիս-Յդնա, Նախիջևանի ԻԽՍՀ տարածքի բարբառ-ներում<sup>41</sup>:

Առավել բազմաբնույթ են հնչյունների անկման դեպքերը: Հ-ի անկում է արձանագրվում բառի մեջ տարբեր դիրքերում. բառասկիզբ՝ ամա, ախտիլ, անգրեծակի, ավտալ. բառամեջ՝ խոնարութին, շնուֆ. բառավերջ՝ աշխար, խոնաբ: Հետաքրքիր է ֆիզիդ, միզիդ բառերում բառամիջյան դիրքում հ հա-գազի անկումը, որ հետևանք է քիզ+հիդ, միզ+հիդ կառույցներում գերան-վան և կապի կցման:

Ն-ն ընկել է շանց տալ և պտոխի ձևերում: Առաջինը (նաև՝ շանց տալ-ը) նշված է Երևանի, Թիֆլիսի բարբառներում:

Բառամիջում և բառավերջում առավել շատ են ր-ի անկման դեպքերը՝ յիփ, վի կենալ, հասնիֆ, մտիկ տոլ, ամա/համա, դուս, շնուֆ, բացրանալ, ժած գալ: Համանման երևույթ է առկա միջին գրական հայերենում<sup>42</sup>:

Մյուս հնչյունների անկման դեպքերը սահմանափակվում են մեկական նմուշներով, որպիսիք Ռ. Աբրահամյանը համարում է «պատահական ան-կումներ»<sup>43</sup> -վ-՝ -դժար, -կ-՝ -մե, -գ-՝ -ֆի:

Դրափոխություն է նկատվում բարբառներում նույն ձևով լայնորեն գոր-ծածվող՝ անգան, դարդակ, սիպտակ(-իլ) բառերում:

Համակարգի բերելով Մայաթ-նովայի լեզվի հնչյունաբանական իրողու-թյունները՝ ձայնավորների ու երկբարբառների, բաղաձայնների հնչյունա-փոխությամբ, հանգում ենք այն եզրակացությանը, որ լեզվական այդ ոլոր-տով խաղերի լեզուն հարազատ էր ժամանակի Թիֆլիսի բարբառին: Իր հեր-թին վերջինս մի համախառն լեզու էր՝ արևելահայ և արևմտահայ բարբառ-ների յուրօրինակ խառնուրդ, որ բացատրվում է Շահ-Աբբասի և հաջորդների ասպատակություններով, պատմական Հայաստանի տարբեր վայրերից տե-ղահանված և Թիֆլիսում բնակություն հաստատած հայության իրավիճա-կով:

## ОСОБЕННОСТИ ФОНЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ АРМЯНСКИХ ПЕСЕН САЯТ-НОВЫ

Н. Г. ОГАНЕСЯН

### Резюме

При систематизировании фонетических явлений армянских песен Саят-Новы прослеживается близость языка его песен к тифлисскому диалекту XVIII века. Тифлисский диалект того времени—своеобразная смесь восточно- и западноармянских диалектов. Это нашло широкое отражение и в языке поэта, в частности, в звуковом аспекте. Неоднородный характер диалекта объясняется создавшейся ситуацией насильственного выселения армян с исторических армянских земель вследствие разорительных набегов Персии.

41 Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 47 և աղ. II:

42 Ակնարկներ, էջ 144—146:

43 Մ ա յ ա Թ - ն ո վ ա յ ի խաղերը, էջ 36:

THE PHONETIC SYSTEM PECULIARITIES OF SAYAT-NOVA'S  
ARMENIAN CHANTS

N. G. HOVHANNISSIAN

## S u m m a r y

The systematization of the phonetic facts of Sayat-Nova's Armenian chants shows that their language was close to the dialect of Tbilisi of the 18th century. The Tbilisi dialect of that time was a specific mixture of eastern and western Armenian dialects. And it is largely reflected in the language of the chants, particularly felt in the sound system. The non-homogeneity of the dialect is explained by the presence of the representatives of different dialects of Tbilisi because of the forced deportation of Armenians from their native land.